Կարծիք

Անդրանիկ Ռաֆայելի Առաքելյանի «Միջարաբական համագործակցության առանցքային հիմնախնդիրները Մերձավոր Արևելքում 1991-2011 թթ.» ատենախոսության վերաբերյալ

Մերձավոր Արևելքի արաբական երկրները կարևորագույն նշանակություն են ունեցել 20-րդ դարի և 21-րդ դարի սկզբների աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործընթացների բյուրեղացման հարցում: Մեծ պետությունները, որպես կանոն, արաբական երկրներում որոշակի քաղաքական և տնտեսական շահեր են հետապնդել, ինչն իր ազդեցությունն է ունեցել միջարաբական հարաբերությունների ընդհանուր խորապատկերի վրա: Մյուս կողմից, արաբական երկրների միջև գոյություն են ունեցել թե՛ ընդհանուր շահեր, թե՛ հակասություններ ու մրցակցություն, որոնք նույնպես ներազդել են արաբական երկրների միջև հարաբերությունների ձևավորման վրա: Իրավամբ, միջարաբական հարաբերությունները միջազգային հարաբերությունների կարևորագույն բաղկացուցիչն են, հետևաբար այդ հարաբերությունների ուսումնասիրությունը թե՛ գիտական, թե՛ քաղաքական կարևոր և արդիական նշանակություն ունի: Միջարաբական հարաբերությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս խորքային կերպով հասկանալ Մերձավոր Արևելքի քաղաքական անատոմիան, վեր հանել տարածաշրջանի կարևորագույն քաղաքական հարցերը, վերլուծել դրանց փոխակերպումները, ձևավորման պատճառներն ու հեռանկարը: Սխալված չենք լինի, եթե նշենք, որ միջարաբական հարաբերությունների դինամիկայից է կախված տարածաշրջանի անվտանգային պատկերը և դրա տեսլականը: Պատահական չէ, որ «Արաբական գարնան» ընթացքում Մերձավոր Արևելքի ազգային անվտանգության համակարգը, կարելի է ասել, փլուզվեց, քանի որ այդ ընթացքում արաբական երկրների միջև ի հայտ եկան բազմաթիվ անհաղթահարելի տարաձայնություններ, իսկ առանձին արաբական պետություններ, ինչպես օրինակ՝ Կատարը, ձեռնամուխ եղան առկա համակարգի փլուզմանը և նոր հենքի վրա դրանց վերստեղծման անհաջող փորձերին:

Ատենախոսության թեման կարևոր է նաև Հայաստանի Հանրապետության տեսանկյունից, քանի որ արաբական ուղղությունը Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից է: Այդ տեսանկյունից ևս Անդրանիկ

Առաքելյանի ատենախոսության թեման աչքի է ընկնում գիտական և քաղաքական կարևորությամբ ու արդիականությամբ: Ատենախոսության մի շարք կարևոր թեզեր ու դրույթներ կարող են շահեկան լինել ՀՀ արտաքին քաղաքաղականության մշակումների համար: Ատենախոսությունն աչքի է ընկնում նաև որպես գիտական նորույթ ունեցող աշխատանք. հեղինակը մեզանում առաջ անգամ ուսումնասիրում է միջարաբական հարաբերությունների փոխակերպումները 1991-2011 թվականների շրջանակներում տարբեր տեսանկյուններից՝ վեր հանելով և զուգորդված ձևով վերլուծելով Արաբական պետությունների լիգան և Ծոցի համագործակցության խորհուրդը՝ համաարաբական քաղաքականության տեսանկյունից՝ լուսաբանելով միջարաբական հարաբերությունների բնորոշ խնդիրներն ու հակասությունները: Շատ կարևոր է, որ հեղինակին հաջողվել է Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքականությունը քննության առարկա դարձնել համաարաբականության պրիզմայով:

Ատենախոսությունն ունի կուռ կառուցվածք: Այն բաղկացած է չորս գլխից, որոնցից յուրաքանչյուրը կազմված է ենթագլուխներից /առաջին գլուխը՝ երեք, երկրորդը, երրորդը և չորրորդը՝ երկուական/, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, երկու հավելվածից: Ատենախոսության բոլորը մասերը միմյանց հետ կապված են տրամաբանական ամուր կապով: Ճիշտ են ընտրված գլուխների և ենթագլուխների վերնագրերը: Դրանք հավասարապես արտացոլում են աշխատանքի բովանդակային կողմը: Ատենախոսության մեթոդաբանությունը նույնպես ճիշտ է. աշխատանքի հիմքում ընկած են պատմահամեմատական, քննական և վերլուծական մեթոդները:

Կարևոր է արձանագրել, որ ատենախոսությունը գրված է սկզբնաղբյուրների և մասնագիտական պատշաճ գրականության լայն հենքի վրա՝ տարբեր լեզուներով: Օգտագորված են ՄԱԿ-ի, Արաբական պետությունների լիգայի, Ծոցի համագործակցության խորհրդի, միջազգային մի .շարք կազմակերպությունների բանաձևեր, որոշումներ ու հայտարարություններ, որոնք արտացոլում են արաբական քաղաքականության օրակարգային հիմնախնդիրները:

Հարկ է նշել, որ ատենախոսության հեղինակը՝ Անդրանիկ Առաքելյանը, հանգել է միանգամայն հիմնավոր եզրահանգումների: Ատենախոսության մի շարք բաժիններ ու ենթաբաժիններ ամրագրված են անհրաժեշտ եզրակացություններով: Միանգամայն ճիշտ են հեղինակի եզրակացությունները՝ կապված արաբական էլիտաների կողմից պաղեստինյան հարցի ընկալումների, դրանց նկատմամբ ձևավորած դիրքորոշումների,

Իսրայելի նկատմամբ գործնական և քարոզչական մոտեցումների և առնչվող այլևայլ խնդիրների մասին: Ատենախոսության մեջ հեղինակն իրավացիորեն մատնանշում է, որ միջարաբական հարաբերությունների հիմնական առանցքը, արաբական երկրների ընդհանրությունների և հակասությունների անկյունաքարը պաղեստինյան հարցն էր, որը ձևավորում էր միջարաբական հարաբերությունների դինամիկան: Մյուս կողմից, հիմնավոր են հեղինակի եզրահանգումները՝ կապված Ծոցի երկրորդ ճգնաժամի և 2003 թ. ԱՄՆ-ի կողմից Իրաք ներխուժման հետ, որոնք, ինչպես նշվում է, թուլացրեցին արաբական աշխարհը տարբեր, այդ թվում միասնության և անվտանգության տեսանկյունից: Պաղեստինյան խնդրից հետո, որն արաբական աշխարհի ամենազգայուն հարցն էր, ի հայտ եկան Իրաք-Քուվեյթ հակասությունները. Իրաքն ընկալվեց որպես արաբական միասնության մեջ սեպ խրող պետություն: Ատենախոսության հեղինակն իրավացի է, երբ նշում է, որ արաբական տարբեր երկրների հետապնդել են հակոտնյա շահեր, ունեցել են տարբեր հետաքրքրություններ, իսկ Արաբական պետությունների լիգան, որոշ առումով նաև՝ Ծոցի համագործակցության խորհուրդը, չեն կարողացել ազդեցության լծակներ և միջարաբական հակասությունների կարգավորման անհրաժեշտ մեխանիզմներ մշակել: Ատենախոսության հեղինակն իրավացիորեն նշում է, որ արաբական աշխարհին միավորող բազմաթիվ գործոններ՝ պատմական, մշակութային, լեզվական, կրոնական և այլն, յուրաքանչյուր պետության ազգային շահերի պատճառով չեն ծառայել համարաբական խնդիրների սինխրոնիզացմանը, ընդհանուր օրակարգերի ձևավորմանը և դրանց իրականացման համար քաղաքական կամքի և միասնական մեխանիզմների հետևողական գործադրմանը:

Ատենախոսության հեղինակը՝ Անդրանիկ Առաքելյանը, կատարել է բավական շնորհակալ և բարդ աշխատանք՝ չնայած աշխատանքում տեղ են գտել որոշ թերություններ ու անճշտություններ, իսկ առանձին հատվածներ խմբագրման կարիք ունեն: Շահեկան կլիներ, եթե ատենախոսության հեղինակը գնահատական տար համաարաբականության գաղափարական հենքերի արդյունավետության և նոր մոդելի ստեղծման հնարավորությանը, նշելով, թե որքանով արմատական փոփոխությունները և արաբական մտքի նոր ճարտարապետությունը կկարողանային այլ ընթացք հաղորդել համաարաբական խնդիրների կարգավորմանը: Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը կարողանար ավելի հստակ գնահատական տալ Ծոցի երկրորդ ճգնաժամին՝ Իրաքի՝ 1990 թ. ամռանը Քուվեյթ ներխուժմանը միջարաբական հարաբերությունների,

պաղեստինյան հիմնախնդրի և արաբ-իսրայելական հարաբերությունների վրա ունեցած ազդեցության տեսանկյունից: Փաստ է, որ Իրաքի կողմից Քուվեյթ ներխուժելը ոչ միանշանակ գնահատական ստացավ արաբական աշխարհում, մասնավորապես Ծոցի երկրներում: ՊԱԿ -ի նախագահ Յասեր Արաֆաթը ճակատագրական սխալ որոշում ընդունեց՝ աջակցելով Իրաքին, ինչը մեծ հիասթափություն և դժգոհություն առաջացրեց Ծոցի արաբական միապետությունների շրջանում, որոնք տևական ժամանակ և հետևողականորեն ֆինասնական և քաղաքական լայն աջակցություն էին ցույց տալիս ՊԱԿ -ին, Յասեր Արաֆաթին, պաղեստինցի փախստականներին, պաղեստինյան հարցի արդար կարգավորմանը, պաղեստինյան օրակարգի ֆինանասվորմանը: Այդ շրջանից ի վեր Ծոցի միապետությունները վերանայեցին իրենց մոտեցումը թե՛ համարաբական խնդիրների, թե՛ Պաղեստինի նկատմամբ: Այդ շրջանից ի վեր այլ մոտեցումներ մշակվեցին արաբական ազգայնականության, համաարաբական օրակարգի, ինչպես նաև Իսրայելի նկատմամբ: Ծոցի միապետություններն ավելի գործնական քայլեր արեցին Իսրայելի հետ ոչ հրապարակային և հրապարակային հարաբերություններ ձևավորելու տեսանկյունից արդեն Ծոցի երկրորդ ճգնաժամից ի վեր, չնայած մինչ այդ էլ դրանք եղել են:

Մյուս կողմից, շահեկան կլիներ, եթե հեղինակը միջարաբական հարաբերությունների տեսանկյունից գնահատական տար Ծոցի արաբական միապետությունների դոնորական գործունեությանը, ինչը կարևոր նշանակություն ունեցավ արաբական աշխարհում գործնականում մի շարք հումանիտար և ինստիտուցիոնալ խնդիրների լուծման համար: Դոնորական առաքելությունը կարելի է դիտարկել նաև «փափուկ ուժի» գործիքակազմ, որն առանձին Ծոցի երկրներ որդեգրեցին իրենց արտաքին քաղաքականության մեջ: Ըստ այդմ, ցանկալի կլիներ ավելի հստակ ներկայացնել նաև արաբական աշխարհում առաջնահերթություն ստանձնելու շուրջ աստիճանաբար ձևավորվող մրցակցությանը, ինչը հետագայում հստակ դրսևորվեց հենց Ծոցի տարածաշրջանում:

Շահեկան կլիներ, եթե հեղինակն ավելի որոշակի գնահատական տար արաբական աշխարհի համար Իսրայելի դերին: Համարաբական միասնությունը և արաբական համերաշխությունը գուցե այլ դրսևորումներ ունենային, եթե արաբական երկրները հենց սկզբում կարողանային համարժեք և ճիշտ գնահատական տալ

Իսրայելին և հակազդեցության փոխարեն ընտրեին համագործակցության ճանապարհը, ինչին հեղինակը, ընդհանուր գծերով, անդրադառնում է:

Նշված առանձին դիտարկումները ստվեր չեն գցում ատենախոսության ընդհանուր դրական գնահատականի վրա: Աշխատանքն իրապես հաջողված է: Ուստի, միջնորդում եմ Արևելագիտության ինստիտուտում ԲՈԿ-ի է.00.002 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ գործող գիտխորհրդի առաջ, որպեսզի Անդրանիկ Առաքելյանը ստանա իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, որին նա միանգամայն արժանի է:

Ատենախոսության պաշտոնական ընդդիմախոս՝
Արաքս Փաշայան, պ.գ.թ., դոցենտ

Հունիսի 12, 2023 թ.

Հաստատում եմ
Հ. Գարագաշյան
ՀՀ ԳԱԱ գիտքարտուղար

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ
Институт Востоковедения Национальной Академии Наук РА
Institute of Oriental Studies Nat. Academy of Sciences Armenia
00009554